

Ոչ նուազ տարուած էին քրիստոնեայ աշխարհէն գալիք օգնութեան մը գաղափարով և ամէն կողմ դիմումներ կը կատարէին :

Վենետիկի հասարակապետութեան՝ կրեաէն պաշտպանելու համար ընդդէմ Օսմանցիներու մղած կռիւները 1664—1669ին, մեծապէս յուսադրեցին Արեւելքի ժողովուրդները : Մասնաւորապէս կը յիշուի, թէ Պուլկարները մեծ պատրաստութիւններ տեսած էին :

Պետրոս Փարզէվիչ (1612—1674+) անուն Պուլկար մը, աստուածաբան, հինգ լեզու խօսող — որոնց մէջ էր նաև հայերէնը —, ուսումնական, պերճախօս և եւրոպական ազդեցիկ շրջանակներու ծանօթ անձ մը, կաթողիկէ քահանայի մը հետ արտասահման զրկուեցաւ, յանձնարարարուած՝ Մոլտավիոյ իշխանէն, Սերպերու և Պուլկարներու համար օգնութիւն խնդրելու : Ան քանի մը անգամ այցելեց Աւստրիոյ և Լեհաստանի արքունիքները և Վենետիկի հասարակապետութեան վարիչներուն : Ամէն տեղ մեծ պատուով ընդունուեցաւ և պատուանշաններով քաջալերուեցաւ, բայց զինեալ օգնութեան ոչ մէկ խոստում կըրցաւ ձեռք բերել :

Վերջապէս, Պապին դիմելու համար գնաց Հռոմ, ուր մեռաւ 1674ին, ազօթելով որ «Ամենակարողը սիրտերը բոցավառէ ու այնքան հիմնաւոր յոյսերու հաւատքը չկորսուի» :

Աւելի վերջ (1681—1688) երբ Թուրքերը պատերազմ կը մղէին Աւստրիոյ, Լեհաստանի, Վենետիկի ու Ռուսիոյ դէմ, արեւմտեան Պուլկարիա, Փարզէվիչի գործակիցներուն առաջնորդութեամբ, ասպատակական դրօշ պարգեց, բայց ոեւէ դրական օգնութիւն չստացաւ քրիստոնեայ պետութիւններէն և ըմբոստութիւնը զիւրաւ խեղդուեցաւ արիւնի ճապաղիքներու մէջ (ձախսումս, թ. 203 /2024):